## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/118 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Մեծամոր** **09 հուլիսի 2026թ.**

2026թ-ի հուլիսի 7-ից 9-ը ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Մեծամորի համայնքապետարանի շենքում տեղի ունեցավ Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրի 13-րդ, 16-րդ և 19-րդ փողոցների գազիֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայությունների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԳՀԾՁԲ-26/118 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Դ. Ալեքսանյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, |
| Լ. Մուրադյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի գլխավոր մասնագետ, |
| Դ. Մովսիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ, |
| Ե. Հովհաննիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի երկրորդ կարգի մասնագետ, |
| Ա. Ավետիսյան՝ | Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի առաջին կարգի մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Դ. Ալեքսանյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Վարդանյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր հինգ անդամները, հետևաբար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտերի մասին:
3. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
4. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի հուլիսի 7-ին, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանի վարչական կենտրոն 4 հասցեում գտնվող Մեծամորի համայնքապետարանի շենքում ժամը 17:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Մեծամոր համայնքի Նոր Արմավիր բնակավայրի 13-րդ, 16-րդ և 19-րդ փողոցների գազիֆիկացման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության անցկացման և եզրակացության տրամադրման ծառայություններ | 100,000.00 |

Ընթացակարգի հայտերի բացումը նախատեսված էր www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի հուլիսի 7-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ Ընթացակարգին մասնակցելու հայտեր չեն ներկայացվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը, 2026թ-ի հուլիսի 9-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած:

2. Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Դ. Ալեքսանյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Լ. Մուրադյան ____________

Դ. Մովսիսյան ____________

Ե. Հովհաննիսյան ____________

Ա. Ավետիսյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Վարդանյան ____________